ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ

ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գարնանային միգապատ, մառախլապատ օր է։ Լսվում է հնադարյան վանքի զանգակների դողդոջուն զողանջը։ Քամին կարծես փախցնում տանում է թրթռացող ձայների ելևէջը։

Մեծ պասի ապաշխարության և խոստովանության օրերն են։ Տաճարում արդեն սկսել են ճաշու ժամերգությունը։ Տաճարի ներսում այսօր արտակարգ եռուզեռ է տիրում, բոլորը ինչ՝որ գործի վրա են։ Լուսաբարձրագույնի կարգադրությամբ Մայր Տաճարի թանգարանից հանում են թանկագին շապիկներ, եպիսկոպոսական զգեստներ, գավազան, պատարագի սպասներ և այլն։ Բոլորը նայում են իրար, ժպտում, ինչ որ բան ասում։

Այսօր Մայր Տաճարում կատարվելու է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու յոթ Ս. Խորհուրդներից մեկը՝ ձեռնադրության սրբազան արարողությունը։ Հոգևոր ճեմարանը իր ուշիմ և խելացի սաներից երեք հոգու ընծայաբերում է Հայ Եկեղեցուն։ Երեք կորովի ու խելացի երիտասարդներ հանձն են առել իրենց վրա կրելու սարկավագության պատասխանատու և ծանր լուծը։ Ժողովրդի ծոցից ելած երեք նորահասներ, որոնք միանգամ ընդմիշտ իրենց նվիրել են անխարդախ ծառայելու հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու շահերին։

Ժամերգությունը վերջացել է, բոլորը հավաքվել են ավանդատունը։ Ձեռնադրողը՝ Ռուբեն Արքեպիսկոպոս Դրամբյանը զգեստավորվել է և գավազանն ու խաչը ձեռքին սպասում է։ Նրանից հետո հերթով կանգնել են վարդապետները, քահանաները, սարկավագները ու դպիրները, առջևում են երեք ընծայները և կերոնակիրները։

Բացվում են ավանդատան դռները և խունկարկող սարկավագը քարոզում է՝ «Եւ եղ իմաստութեան զաւէր աղաչեսքուք, ընկալ կեցո և ողորմեաս»։

«Օրհնութիւն և Փառք Հօր և Որդւոյ...», լսվում է Սրբազանի ձայնը, և հանդիսավոր թափորը, «Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնք» ախորժալուր շարականի հնչյունների ներքո շարժվում է առաջ։

Թափորը հասնում է Տաճարի մայր դռների առաջ։ Եպիսկոպոսը նստում է աթոռին, ընծայալները շրջում են նրա առաջ, իսկ աջ կողմը կանգնում է խարտոյիլակ քահանան։ Սկսում է ձեռնադրության սրբազան հանդեսը։ Սրբազանի արծվենի դեմքը այսօր սովորականից հուզված է, նրա հոգեթով ձայնը բեկվում է հուզմունքից, խաչը բռնած ձեռքը դողում է, արցունքները խեղդում են նրան, բայց նա հաղթահարելով հուզմունքը, սկսում է կարդալ համապատասխան աղոթքը։

«Ի հատանել հերացդ՝ հատցի ի ձէնջ երկրավոր ցանկութիւն աշխարհիս, ամէնս, ասելով կտրում է երեք նվիրյալների՝ Գուրգենի, Սարգսի և Հենրիկի մազերը։ Իսկ ի՞նչ են մտածում նրանք նվիրական այդ հուզիչ րոպեին, մտածո՞ւմ են արդյոք, որ այդ իսկ վեհ վայրկյանից իրենց կյանքը առհավետ կապվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, հոգևորականի բարձր կոչման հետ, որ իրենք կանգնում են վեհ գործի մեծ ճանապարհի վրա։ Այո՛, նրանք այդ բոլորը քաջ գիտեն, գիտեն նաև այն, որ այդ մեծ գործի համար պիտի զոհաբերեն այն ամենը, ինչ թանկ է մարդու համար, ինչ իրենցից կպահանջվի։

Արարողությունը շարունակվում է և Արքեպիսկոպոսը հերթով շնորհում է նրանց եկեղեցական նվիրապետության ցածր աստիճանները՝ դռնապանի, ընթերցողի, երգմնեցուցչի և ջահրնկալի, մեկ առ մեկ նրանց ձեռքը տալով այն բոլոր եկեղեցական սպասները,

որ նրանք պիտի գործ ածեն եկեղեցում։ Դպիրները երգում են։

Եկեղեցում լիքն են. հավատացյալների խուռներամ բազմությունը լցվել է-հերս, ներկա են Հոգևոր Ճեմարանի ռեկտորը, դասագարդ հոյակերտ կամարները թնդում են ամբարձ լեր սուրբ եկեղեցիս շարականի մելոդիկ մնչյունների ներքո, ձայները հալվում, անէանում են Տաճարի գեղեցիկ գմբեթի դլխապտույտ բարձրության մեջ։ Դպիրը կանգնում է ավագ սեղանի բեմի առաջ, ծնկաչոք առաջ են գալիս նվիրյալները։

Լսվում է խարտավիլակ քահանայի ձայնը. «Եղբարք սիրեցնալք, աղաչեսցուք զԱստուած տալ ծառայիցս իւրոց զօրհնութիւն իւր ի զօրացուցանել զսոսա ի պաշտօնս փոքր սարկաւագութեանցս։

Եպիսկոպոսը մի սրտառուչ աղոթքով պա-



ՆՈՐԸՆՏԱ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԸ
Ձախից աջ՝ 1) Հենրիկ Միսակի Ավետիսյան, 2) Սարգիս Գրիգորի Սարգսյան, 3) Գուրգեն Հովհաննեսի Մուրադյան։

խոսական կազմը և ուսանողությունը, բոլորի հայացքները ուղղված են ձեռնադրության արարողությանը, իսկ նրանք՝ այդ երեքը լուռ, դլխիկոր, շոքել են։

Սրբազանը վեր կացավ աթոռից, հիմա արդեն պետք է տալ հինգերորդ աստիճանը, որ է կիսասարկավագությունը։

Խնկից սևացած վաղեմի տաճարի նկարա-

տասխանում է նրան. Ո՞րքան հույզ, սեր, իմաստություն ու խրատական են դրել մեր երանելի նախնիքը այդ սրբազան աղոթքների մեջ. «Պահեա զսոսա առանց ամօթոյ և աբատոյ, արժանաւորիլ ի պաշաճ ժամանակի հասանել մեծի աստիճանի սարկաւագութենանց...»,—շարունակում է եպիսկոպոսը,— «Փրկեա զսոսա ի դատարկաբանութենէ և ի ցոփութենէ. արժանաւորեա սրբութեամբ սպասաւորել եկեղեցւոյ քում սրբոյ...»

«Տեսէք որդեակք,— շարունակում է նա,— յոր խորհուրդ կոչեցաք, քանզի ի վերջին պաշատմանէն՝ որ յառաջ եկիք, յայսմհետէ արթնութեամբ կացէք ի պաշտօնս եկեղեցւոյ, դպաստացարուք ի ծուլութենանց, ուղղախոհ լերուք ի հեշտասիրութենանց...»

Սրբազանը «պահպանիչ» ասելով վերջացնում է հանդիսավոր արարողությունը, շնորհելով նվիրյալներին կիսասարկավագություն։

Վերջացնելուց հետո նա մոտենում է երեք կիսասարկավագներին, համբուրում նրանց և ասում ողորված. «Սիրելի զավակնե՛ր. հավատարիմ եղե՛ք Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին և հայ պետականությանը, ամբողջ հոգով սիրեցե՛ք ձեր հարազատ Հայրենիքը, Աստված թող շնորհավոր անե...», և զսպված արցունքները պոռթկում են հուզմունքից և հորդառատ թափվում նրա աչքերից։ Բոլորը մեկ մեկ մոտենում են նորընծաներին, համբուրում և շնորհավորում նրանց, բոլորի աչքերին ուրախության արցունքներ են շողում։

Ահա մոտենում է նրանց մի պառավ հայ մամիկ խորշոմներով ծածկված դեմքով. արցունքը աչքերին գրկում. համբուրում է նրանց ճակատները մրմնջալով՝ «Բալե՛ք, հաստատ մնաք ձեր կարգին, Աստված թող շնորհավոր անե։

Հայ Եկեղեցին իր արժանավոր զավակներն թիվը ավելացրեց շնորհունակ երեք նոր երիտասարդներով։

***

Շարաթ օր էր։ «Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի վիրապն, կարդում ենք օրացուցում։

Հայ Եկեղեցին տոնում է այսօր իր երանելի Ս. Հայրապետի խոր Վիրապ մտնելը, «նասելի չարչարանքներից հետո։ Տիւր էր այն ժամանակներում, անմեկնելի խավարով լիներ ծածկված հայոց դաշտերն ու լեռները։ Դեռևս հեթանոս հայոց Տրդատ արքան իր անագորույն, դաժան վիրաբերմունքը ցուցաբերեց Քրիստոսի մեծ խոստովանողի, Հայաստանյայց աշխարհի մեծ Լուսավորչի նկատմամբ։ Սակայն այդ պարտությունը ժամանակավոր էր, նույն Լուսավորչի ձեռքով 303 թվին Հայաստան աշխարհի վրա ծաղեց քրիստոնեության կենսատու լույսը։

Ժամը 11-ն անց է, Մայր Տաճարում ամենայն հանդիսավորությամբ սկսել է Ս. Պատարագը։ Պատարագիչն է Սահակ Ս. Վարդապետը, սեղանի աջ կողմում հանդիսավորապես զգեստավորված բազմել է աթոռին Ռուբեն Արքեպիսկոպոսը, աջ ու ձախ կանգնել են սարկավագներն ու իերոնակիները։ Այսօր երեք կիսասարկավագներին պիտի շնորհվի սարկավագության աստիճան։ Տաճարում կանգնելու տեղ չկա։

«Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով...», լսվում է պատարագչի ձայնը, եսկ դպիրները սկսում են «Ուրախ լեր» շարականը. սաղմոսերգությունները սաղմոսերգում են ներքևից և երեք կիսասարկավագները շոքեշոք բարձրանում են բեմի ձախակողմյան աստիճաններից վեր, խարտավիլակը ձայնում է. «Հա՛յր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր Սուրբ Եկեղեցի, զի զԳուրգեն, զՍարգիս և զՀենրիկ կիսասարկաւագունս՝ զորս ընծայէ քեզ. ձեռնադրեսցես մեզ ի սարկաւագս։

«Ե՛ր դիտէ՞ք դի արժանաւոր են...», լսվում է եպիսկոպոսի խրոխտ ձայնը։ Եվ այսպես շարունակվում է ձեռնադրության կարգը։ Սարկավագները երգում են «Աստուածային և երկնաւոր շնորհ...», դպիրները պատասխանում են երեք անգամ՝ «Արժանի են»։ Կարդացվում են Պողոս առաքյալի թղթերը, Ավետարանը, Հավատամքը և այլն։

Արդեն լսվում են Սրբազան Հոր աղոթքի վերջին մրմունջները՝ «Կեցանք ձեր և վարք ձեր լիցին օրինակ ժողովրդեանս՝ որք են սուրբ հաւատով ի Քրիստոս։

Հայ հոգևորականը իր մաքուր ու անբիծ կենցաղավարությամբ ու մտածելակերպով օրինակ պիտի դառնա իր սիրեցյալ հոտին։

Նորընծաները վեր են կենում, համբուրում Սրբազանի աջը և կանգնում սեղանի աջ կողմում հեզությամբ և խոնարհ։

Իսկ Սրբազանը եպիսկոպոսական զավազանը ձեռքին դալիս է բեմի մեջտեղը և քարոզում ժողովրդին։ Նա իր քարոզում դրվատում է Գրիգոր Լուսավորչի հանդուն գործունեությունը Հայաստանում։ Բացատրում է Մայր Աթոռի դերը հայ ժողովրդի դառն ու տառապալից անցյալում և ներկայումս, կապում է իր խոսքը օրվա հանդեսի վերաբերյալ։ «Էջմիածինը, —ասում է նա,— դեռ մեծ ամելիքներ ունի և դրա համար նրան հարկավոր են իր ժողովրդին և իր Եկեղեցուն նվիրված լավագույն ուժեր։ Մայր Աթոռը այսօր իր զարթոնքն է ապրում, նա կանգուն է և կանգուն էլ կմնա։ Եվ այս բոլորը Հայ Եկեղեցու գերագույն պետի՝ Գեորգ Զ. Կաթողիկոսի իմաստուն ղեկավարության ար-

դումքն է։ Աղոթե՛նք սիրելիք, որ Աստված երկար կյանք պարգևե մեր սիրելի Հովվապետին, որ իր Հայրենիքի կողքին կանգնած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միշտ վեհ ու անսասան մնա, որ իրականանա Սիսյուռքի մեր հարազատ եղբայրների վաղեմի տենչը, այն է՝ հավաքվել Մայր Հայրենիքում, հայրենի տանը, հայրենի շեն ծոցի շուրջը»։

Պատարագից հետո Մայր Աթոռի միաբանները հավաքվում են Վեհարանում։ Նրանք եկել են մի եղբայրական ընդհանուր սեղանի շուրջը շնորհավորելու միաբանության նորեկ անդամներին, իրենց եղբայրական ու խրատական խոսքն ասելու նրանց։ Սեղանի վերևում նստել են երկու տարեց և ավագագույն միաբաններ՝ Ռուբեն և Վահան Արքեպիսկոպոսները, ապա հերթով մյուսները։ Ներկա է նաև Հոգևոր Ճեմարանի ռեկտոր Մ. Մինասյանը։

Ճաշաբեղանը օրհնելուց հետո սկսում են խմել կենացներ. առաջարկվում է ամենից առաջ խմել Վեհափառ Հայրապետի կենացը։ Տ. Նիկողայոս ավագ քահանա Բալեյանը երգում է «Տէր կեցո»ն։ «...Ի քո իշեայ տեղի զԱթոռ Հայրապետի մեր նստատեա»,— լսվում է նրա հոյակապ տենորը և ապա շարունակում՝ «Աջովդ նամատարած զազգ մեր ուրտահալած փոյթ զումարեա յաշխարհ Ա-ռարատեան...»։

Խոսում են Վահան և Ռուբեն արքեպիսկոպոսները. նրանք խրատական շատ բան են ասում նորընծաներին, ելնելով իրենց միաբանական բազմամյա փորձից։

«Ձեր նպատակը պիտի լինի միայն ու միայն աշխատանքը, անդուլ, քրտնաջան աշխատանքը, հավատով լեցուն, պարզ ու միամիտ հոգով, և միայն այն ժամանակ դուք կհասնեք արդյունքի։ Եկեղեցասիրությամբ և հայրենասիրությամբ տոգորված աշխատանքը երջանկություն կբերի ձեզ։ Աշխատեցե՛ք դավակները, այդպիսին լինել, որպեսզի արդարացնեք հավատացյալ ժողովրդի, Հայ Եկեղեցու և մանավանդ մեր Վեհափառ Հայրապետի մեծ հույսերը»,— ասում է Ռուբեն Արքեպիսկոպոսը։

Իրար հետևից ելույթ են ունենում նաև մյուսները. բոլորն էլ ուզում են խոսել, իրենց սրտի բերկրանքը հայտնել օրվա ուրախության առթիվ։

Ելույթ են ունենում նաև նորընծա սարկավագները։ Մանրթանանք նրանց հետ. 1) Մուրադյան Գուրգեն Հովհաննիսի, Էջմիածնից, 1928 թվին ծնված ծառայողի ընտանիքում, այս տարի ավարտում է Հոգևոր Ճեմարանի լրիվ դասընթացը։ 2) Սարգսյան Սարգիս Գրիգորի, Էջմիածնից, ծնված 1929 թվին գյուղացու ընտանիքում. հայրը զոհվել է Հայրենական Մեծ պատերազմում. սա նույնպես այս տարի ավարտում է։ 3) Ավետիսյան Հենրիկ Միսակի, ծնված 1929 թվին գյուղացու ընտանիքում, Աշտարակի շրջանից. Հենրիկը սովորում է Բ. լսարանում։

Նրանք իրենց շնորհակալությունն են հայտնում Վեհափառ Կաթողիկոսին, իրենց հոգևոր Սրբազան Հորը և միաբանությանը, ռեկտորին, իրենց հանգեպ ցուցաբերած հոգատարության և ջերմ վերաբերմունքի համար։ Նրանք ուխտում են հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն։

«Աշխատենք եղբայրաբար ու սիրով, այնպես, որ ժողովուրդը յուրաքանչյուրիս լի սրտով ասի. «Արժան է մշակն վարձու իւրոյ»,— լսվում է միաբանության շարքերից։

Վերջապես ժամանակն է վեր կենալու։ Առաջարկվում է մի վերջին կենաց՝ Մայր Աթոռի և Մայր Հայրենիքի հարատևության կենացը։ Դահլիճի հոյակապ կամարները թնդում են «Էջ միածին ի հօրէ» հոգեցունց շարականի ուժեղ հնչյուններից։ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։

Բոլորը վեր են կենում և զոհունակությամբ դուրս գալիս դահլիճից։ Բոլորի սիրտը պարուրված է մի անմիկնելի, զվարթ զգացմունքով և յուրաքանչյուրը մտածում է. «Ի՞նչ քաղցր է Հայրենիքը, ոչի՛նչ աշխարհում չի կարող փոխարինել այդ վեհ ու նվիրական զգացումին։

Դրսում խաղաղ երեկո է։ Մայրամուտի վերջին ցոլքերը ցոլցլում են և լուսավորում կաթողիկեի նեղ լուսամուտները և ոսկեգույն խաչերը։ Իսկ օդում, դանդաղատաղ չորս բոլորը վեր ու վար են ճախրում ձյունի պես սպիտակ ճերմակությամբ աղավնիները և կարծես մաքուր, անբիծ այդ աղավնիների թևով խաղաղությունը իր կենսատու շունչն է փռում համայն աշխարհի վրա։